ISSN 2953-805X

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՒ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

6

NATIONAL ACADEMY OF SCIENCES, RA
INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

PROCEEDINGS OF THE INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

HAIA-6

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК, РА
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

ТРУДЫ ИНСТИТУТА АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

ХАИА-6

YEREVAN
IAE PUBLICATION 2024

ЕРЕВАН
ИЗДАТЕЛЬСТВО ИАЭ 2024

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՒ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱԻԱ - 6

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՒ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

6

ԵՐԵՒԱՆ
ՀԱԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2024

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Published by decision of the Scientific Council of the Institute of Archaeology and Ethnography, NAS RA

Խմբագրական խորհուրդ

Գլխավոր խմբագիր՝ *Արսեն Բոբոխյան*

Գլխավոր խմբագրի տեղակալ՝ *Տորք Դալալյան*

Խմբագրակազմ՝ *Լևոն Աբրահամյան, Պավել Ավետիսյան, Աստղիկ Բաբաջանյան, Ռուբեն Բադալյան, Միհրան Գալստյան, Ջուստո Թրաինա, Թեո վան Լինթ, Լորի Խաչատրուրեան, Ռուբեն Կարապետյան, Թամար Հայրապետյան, Արսեն Հարությունյան, Սուրեն Հոբոսյան, Դիանա Միրիջանյան, Ադամ Սմիթ, Պատրիկ Տօնապետեան, Պիտեր Քաուի*

Editorial Board

Editor-in-Cief: *Arsen Bobokhyan*

Vice-Editor-in-Chief: *Tork Dalalyan*

Editorial Stuff: *Levon Abrahamian, Pavel Avetisyan, Astghik Babajanyan, Ruben Badalyan, Peter Cowe, Patrick Donabédian, Mihran Galstyan, Arsen Harutyunyan, Tamar Hayrapetyan, Suren Hobosyan, Ruben Karapetyan, Lori Khatchadourian, Theo van Lint, Diana Mirijanyan, Adam Smith, Giusto Traina*

ՀԱԻԱ պարբերականի հերթական՝ 6-րդ հատորն ընդգրկում է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի, Երևանի պետական համալսարանի, Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարանի, Սիրակուզայի համալսարանի (ԱՄՆ) հետազոտողների հոդվածները, որոնց նախնական տարբերակները որպես զեկուցում ներկայացվել են ՀՀ ԿԳՄՄՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի ֆինանսավորմամբ 2023 թ. հոկտեմբերի 18-19-ին ՀԱԻ Սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի կազմակերպած «Համաշխարհայնացումը և սոցիալ-մշակութային արդի գործընթացները Հայաստանում. հիմնախնդիրներ և հեռանկարներ» գիտաժողովին: Հատորը եզրափակվում է մեկ հաղորդմամբ և Բեյրութում հրատարակվող Հայկազեան հայագիտական հանդեսի երկու համարների գրախոսությամբ:

ISSN 2953-805X

DOI:10.54503/2953-805X

© ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, 2024

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅՆԱՑՈՒՄ ԵՒ ՄԻԳՐԱՑԻՈՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ 7

Միհրան Գալստյան
Մնա՞լ, թե՞ գնալ. Հայաստանից հնարավոր նոր արտագաղթի սոցիալ-մշակութային հիմնախնդրի շուրջ 8

Լուսինե Տանաջյան
Հայ և այլազգի ներգաղթյալների ինտեգրումը Հայաստանում. համեմատական կողմեր 24

Սոնա Ներսիսյան
Հայաստանը ռուսաստանցի ներգաղթյալների ընկալումներում 37

Սյուզաննա Բարսեղյան
Հայաստանի հայրենադարձության քաղաքականության հիմնահարցերն արդի իրողությունների համատեքստում 49

II. ՆԵՐԳԱՂԹՅԱԼՆԵՐ ԵՒ ՏԵՂԱՀԱՆՎԱԾՆԵՐ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԼԱՆԴՇԱՖՏԸ 65

Գայանե Հակոբյան
«Հալեպի շուկան»՝ որպես սիրիահայերի ձեռնարկատիրական գործունեության միկրոմոդել 66

Գարիկ Աթանեսյան
Աուտենտիկության խոսույթը և բեմադրված ժառանգությունը հետխորհրդային Հայաստանի զբոսաշրջային պրակտիկաներում 78

Արմինե Տիգրանյան
Ադրբեջանի կողմից բռնի տեղահանված արցախահայերի մշակութային կյանքին մասնակցության սահմանափակումները (Արցախի Հադրութի շրջանի օրինակով) 89

III. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՒ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅՆԱՑՈՒՄ 113

Ռոբերտ Օհանջանյան
Պրոֆեսիոնալ մշակութային արժեքների փոփոխման որոշ հարցեր ՀՀ-ում գլոբալիզացիայի համատեքստում 114

Լուսինե Անգեղուշ
Հայաստանի Հանրապետության լեզվական քաղաքականությունն արդի շրջանում 124

Մակիչ Վարդանյան
Գլոբալացման խոսույթը հայաստանյան զլմ-ներում. կրթության հիմնախնդրի համատեքստը 139

IV. ԱՎԱՆԴԱԿԱՆՆ ՈՒ ԱՐԴԻԱԿԱՆԸ
ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐՈՒՄ 157

Սվետլանա Պողոսյան
Հազուստը որպես խորհրդահայ և ետխորհրդահայ հասարակության սոցիալ-հոգեբանական ցուցիչ 158

Հասմիկ Աբրահամյան
Ռոման Հովսեփյան
Ուտեստի էթնոմշակութային դերը միգրացիայի շրջապտույտում (նախնական հետազոտություն՝ ըստ Սյունիքից գրառված նյութերի) 174

V. ՍՓՅՈՒՌՔՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ 189

Ռոբերտ Կարապետյան
Սփյուռքի համայնքային կառույցներում հայերի ներգրավվածության խնդիրը 190

Նարե Գալստյան
Հայրենիքի մասին պատկերացումները Լոս-Անջելեսի հայկական համայնքում 204

Նելլի Խաչատրյան
Սալվինե Մարկոսյան
Մարիամ Հարությունյան
Էթնոկրոնական վերափոխարկումը համաշխարհայնացման համատեքստում (հնդկական, թուրքական և իռլանդական սփյուռքների փորձի հիման վրա) 218

VI. ՀԱՂՈՐԴՈՒՄ 237

Հռիփսիմե Ասատրյան
Մանկական բանահյուսության որոշ արդի դրսևորումներ 238

VII. ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ 247

Հայկազեան հայագիտական հանդէսի 2022 տարուան զոյգ գիրքերը 248

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ 263

I

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅՆԱՑՈՒՄ ԵՎ ՄԻԳՐԱՑԻՈՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ

DOI: 10.54503/2953-805X-2024.6-49

Սյուզաննա Բարսեղյան
ՀԱԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐՆ ԱՐԴԻ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Համաշխարհայնացման, աճող *միգրացիոն* հոսքերի և սփյուռքյան համայնքների ձևավորմանը զուգընթաց՝ հայրենադարձության երևույթն ավելի շատ է հայտնվում հետազոտողների և *միգրացիոն* ու սփյուռքի քաղաքականություններ մշակողների ուշադրության կենտրոնում: Հայրենադարձության վերաբերյալ հետազոտությունները հաճախ կենտրոնանում են *էքսպատրիատների*, *միգրանտների*, ինչպես նաև փախստականների, աքսորյալների և գերիների վերադարձի գործընթացի տարբեր կողմերի վրա, ներառյալ՝ իրավական, էթիկական, մշակութային, սոցիալական, տնտեսական ևն: Սփյուռքի ուսումնասիրությունները դիտարկում են վերադարձի միգրացիան երեք հարթություններով՝ որպես գիտական խնդիր, որպես սփյուռքյան առասպելաբանություն և որպես իրականություն՝ վերադարձած *միգրանտների* համար: Այդ իրականությունը հաճախ արտացոլվում է քաղաքականություններում, որոնք իրագործվում են ավելի շատ ծագման երկրների կամ հայրենիքների, ավելի քիչ՝ ընդունող երկրների և միջազգային կառույցների կողմից: Հայրենադարձության քաղաքականությունների վերլուծությունը հնարավորություն է տալիս հասկանալու հայրենադարձության հետ կապված մարտահրավերները, ռազմավարությունները և արդյունքները:

Հոդվածի նպատակն է՝ համակողմանի վերլուծել ՀՀ հայրենադարձության քաղաքականության հիմնախնդիրները՝ Հայաստանում, Սփյուռքում և *գլոբալացվող* աշխարհում տեղի ունեցող իրողությունների համատեքստում: Ուսումնասիրությունն առանձնանում է նրանով, որ վերլուծում է հայրենադարձության քաղաքականությունը համակողմանի՝ Հայաստանի և Սփյուռքի տեսանկյուններից: ՀՀ հայրենադարձության քաղաքականության վերլուծությունը առաջ է բերում հայրենադարձության՝ ծագման վայր կամ հայրենիք վերադառնալու, թվում է, պարզ գործընթացի բարդ սահմանելի լինելու քննարկում՝ հաշվի առնելով բազմատարր սփյուռք ունենալու հանգամանքը, ներկայացնում է հայրենիքի և հայրենադարձության ընկալումները հայկական Սփյուռքում, վերլուծում է միգրացիայի, Սփյուռքի և հայրենադարձության քաղաքականությունները, դիտարկում է Հայաստանի զարգացման համար ռազմավարական նշանակության ռեսուրսի՝ Սփյուռքի ներառման դիսկուրսների, քաղաքականությունների և պրակտիկաների առանձնահատկությունները:

Հիմնաբառեր՝ հայրենադարձություն, միգրացիա, Սփյուռք, հայրենիք, ազգային պետություն, քաղաքականություն:

Ներածություն

Ազգային պետությունները, մի կողմից, ներազդում են անդրազգային միգրացիոն հոսքերի վրա՝ սահմանափակելով կամ ուղղորդելով դրանք, մյուս կողմից, իրենց վրա են կրում միգրացիայի հետևանքները: Միգրացիոն քաղաքականությամբ, իրավական կարգավորումներով, քաղաքացիության մասին

օրենքների միջոցով ազգային պետությունները ներառում կամ բացառում են խմբերին կամ անհատներին պետության կազմի մեջ՝ փոխակերպելով ազգի և ազգային ինքնության սահմանումները: Միգրացիոն հոսքերի այդ կարգավորումներում հատուկ տեղ ունի հայրենադարձությունը, որը պետության կողմից խրախուսվող և աջակցվող ներգաղթի ձևերից է: Հայրենադարձությունը կարելի է սահմանել որպես «ծագման վայր» վերադառնալու գործընթաց: Միջազգային իրավունքում հայրենադարձության քաղաքականությունը դիտարկվում է որպես մարդու հիմնարար իրավունքի՝ «վերադարձի իրավունքի» իրացում՝ տեղափոխվել այն երկրի տարածք, որը համարում է իր հայրենիքը: Այսօր աշխարհի մի քանի տասնյակ երկրներ իրականացնում են հայրենադարձության քաղաքականություն կամ ունեն այդ գործընթացի օրենսդրական կարգավորումներ: Հայրենադարձության ծրագրերը հաճախ իրականացվում են «տիտղոսակիր ազգի» նկատմամբ և խրախուսում են արտագաղթածների վերադարձը ծագման երկիր:

Հայրենադարձությունը կարևորվում է հատկապես սփյուռք ունեցող զարգացող երկրի տեսանկյունից: Այս դեպքում հայրենադարձություն է համարվում սփյուռքի ներկայացուցիչների վերադարձը ելքի երկիր կամ էթնիկ հայրենիք: Այսպես, Հայաստանի զարգացման համար էական է Սփյուռքի մարդկային, սոցիալական և ֆինանսական կապիտալի ներառումը: Եթե այլ երկրների պարագայում հայրենադարձության հիմնական նպատակներից է պետության էթնիկ և (կամ) կրոնական կազմում տիտղոսակիր ազգի ներկայացվածության գերակշռումը, քաղաքական նշանակությունը, ապա Հայաստանի համար հայրենադարձության խնդիրը կարող ենք կարևոր համարել հիմնականում ազգային անվտանգության, ժողովրդագրական, տնտեսական զարգացման, սոցիալ-մշակութային, գիտական տեսանկյուններից:

Սակայն հայրենադարձությունն իր բոլոր տարատեսակներով՝ միայն տիտղոսակիր էթնոսի վերադարձ, քաղաքացիների վերադարձ, փախստականների կամ աքսորյալների վերադարձ, կամավոր, իրավիճակային կամ բռնի վերադարձ, ունի քաղաքականության, իրավական հիմքերի և ինտեգրման ծրագրերի անհրաժեշտություն: Նման քաղաքականության կարիք ունի նաև Հայաստանը: Հայրենադարձության մշակված քաղաքականությունը հնարավորություն կտա ունենալ համակողմանի վերլուծություն և պատկերացում՝ Հայաստանում հայրենադարձության խնդիրների, դրանց հաղթահարման ուղիների բացահայտման, հայրենադարձության քաղաքականության ուղենիշերի, օրենսդրական, իրավական կարգավորման սկզբունքների, ինտեգրման ծրագրերի և ինստիտուցիոնալ աջակցության մեխանիզմների մշակման վերաբերյալ: Դրանք հարկ է մշակել՝ հաշվի առնելով բազմազան պայմաններում գտնվող հայկական Սփյուռքից հայրենադարձության հնարավոր բոլոր սցենարները, հայրենադարձության մտադրություններն ու ներուժը:

Հոդվածն անդրադառնում է վերադարձի հայեցակարգին՝ կապված ՀՀ հայրենադարձության քաղաքականության հիմնախնդիրների հետ: Այն դիտարկում է բազմազան պայմաններում գտնվող հայկական Սփյուռքից հայրենադարձության հնարավոր սցենարները, հայրենադարձության մտադրությունները, հայրենիքի ու ազգային պետության ընկալումները, հայրենադարձության հնարավորությունները և հանձնառությունները Հայաստանում և այլ գործոն-

ներ, որոնք կարևոր են հայրենադարձության քաղաքականության ուղենիշերը սահմանելու համար: Ուսումնասիրության համար հիմք են ծառայել հայկական Սփյուռքի տարբեր համայնքներում իրականացված քանակական և որակական հետազոտությունների տվյալները[1], հայրենադարձության քաղաքականության և խոսույթների վերլուծությունը, ինչպես նաև երկրորդային տվյալները:

Հայրենադարձության ընկալումները Սփյուռքում և Հայաստանում

Հայրենադարձությունը (անգլերեն՝ *repatriation*, լատիներեն՝ *repatriare*) մարդու վերադարձն է ծագման կամ քաղաքացիության վայր[2]: Չնայած սահմանման պարզությանը՝ վերադարձի հայեցակարգը բավականին խրթին է: Վերադարձի երևույթն ինքին բարդ սահմանելի է, գիտական քննարկման առարկա: Գրականության մեջ հանդիպում են տարբեր սահմանումներ՝ հայրենադարձություն, վերադարձի *միգրացիա*, էթնիկ վերադարձի *միգրացիա*, վերադարձ և այլ եզրեր: Այդ սահմանումներն ընդգծում են հայրենադարձության բազմակողմ բնույթը, որն ընդգրկում է ոչ միայն մարդկանց ֆիզիկական վերադարձը հայրենի երկիր, այլև նրանց հոգեբանական, սոցիալական և կազմակերպական *վերաինտեգրումը*:

Որպես *դինամիկ* երևույթ՝ միգրացիան ենթադրում է ընդունող և հայրենի երկրներում, ծագման և քաղաքացիության վայրերում փոփոխություններ ժամանակի ընթացքում: Դա հատկապես դժվարանում է սփյուռքի պարագայում, երբ սփոման նախասկզբնական վայրը չի նույնացվում էթնիկ հայրենիքի, քաղաքացիության երկրի կամ ազգային պետության հետ:

Սփյուռքի տեսաբանների համար վերադարձը գործում է որպես հերքում՝ աքսորի և կորստի հետ կապված մտահոգություններին. միգրանտները մշտապես վերադառնում են տուն, ժամանակավորապես՝ որպես զբոսաշրջիկներ կամ մշտապես՝ որպես հայրենադարձներ[3]: Սփյուռքների ռազմավարությունները սկսեցին կարևորվել *նեոլիբերալ* բարեփոխումների խորապատկերին, որի շրջանակներում ելքի երկրի կառավարությունները ձգտում էին *մոբիլիզացնել* որակավորված *միգրանտներին*՝ հայրենիքի զարգացման ծրագրերի համար[4]:

ՀՀ-ը, ունենալով մեծ Սփյուռք և լինելով պետականության սկզբնավորման փուլում գտնվող զարգացող երկիր, նույնպես կարիք ունի Սփյուռքի ռեսուրսի ներառման, մասնավորաբար՝ հայրենադարձության: Այդ գործընթացը, սակայն, ոչ միայն պայմանավորված է երկրի սոցիալ-տնտեսական, անվտանգային իրավիճակով և պետության քաղաքականությամբ, այլև Սփյուռքի բազմատարր բնույթով, ընկալումներով և մտադրություններով:

1 Հետազոտություններն իրականացվել են ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի ուսումնասիրության բաժնի կողմից՝ «Սեփական և այլազգի միջավայրում հայերի համեմատական հետազոտության հիմնական ուղղությունները. ուսումնասիրության խնդիրներն ու հեռանկարները» պետական նպատակային ծրագրի շրջանակում, 2011-2023թթ.:

2 Goldstein 2014, 6327–6335.

3 Fahrenthold 2022, 301-315.

4 Cohen 2015, 288-300.

Հայկական Սփյուռքից դեպի ՀՀ վերադարձի երևույթը սահմանելու համար անգամ կա դժվարություն: Ցրման տարբեր սկզբնակետերից առաջացած հայկական Սփյուռքի համար այսօրվա Հայաստան վերադառնալու, բնակվելու, վերաբնակվելու գործընթացը կարող ենք անվանել վերադարձ էթնիկ կամ պատմական հայրենիք: Հոդվածում բոլոր նման ընկալումները կբնորոշենք որպես հայրենադարձություն:

Չնայած էթնիկ ինքնության նույնականությանը, Սփյուռքում առկա է մշակութային ինքնության բազմազանություն՝ կախված ընդունող երկրի առանձնահատկություններից, Սփյուռքի ցրման ելակետից (Արևմտյան Հայաստան, ՀՀ, ԽՍՀՄ նախկին երկրներ ևն), սերնդափոխությունից, սփյուռքացման փորձառությունից և այլ գործոններից: Սփյուռքի տարբեր խմբերում բազմազան է նաև հայրենիքի ընկալումը: Վերջինս էական նշանակություն ունի հայրենադարձության գործում: Բնակության երկիրը հաճախ նույնացվում է հայրենիքին: Ավանդական, ետցեղասպանական Սփյուռքի ներկայացուցիչների համար հայրենիքը Արևմտյան Հայաստանն է, իրենց նախնիների ծագման *լոկալ* վայրերը: Առաջին տեղակայման գաղթօջախներից արտագաղթածների համար հաճախ հայրենիքը ելքի երկիրն է (օրինակ, ԱՄՆ, ԵՄ երկրներ ներգաղթած լիբանանահայերի, սիրիահայերի համար կարող է հայրենիք համարվել Լիբանանը, Սիրիան): Կամ՝ համայնքները չեն վերագրում իրենց Սփյուռք բնորոշումը՝ համարելով իրենց բնակության երկրի տիտղոսակիր ազգ (օրինակ՝ Վրաստանի, Թուրքիայի հայերը): Փաստացիորեն, այսօրվա Հայաստանը երկրից արտագաղթածների համար է միայն իրական հայրենիք:

Հայկական Սփյուռքի տարբեր համայնքներում իրականացված հետազոտությունները ցույց են տալիս հայրենիքի մասին պատկերացումների բազմազանություն: Սփյուռքահայերը կարող են «հայրենիք» համարել իրենց ծննդավայրը, ծնողների կամ նախնիների ծննդավայրը, իրենց բնակության երկիրը, ՀՀ-ն ևն: Տարբեր համայնքներում և սփյուռքյան խմբերում այս ընկալումների համամասնությունը տարբեր է: Հայրենիքի այս բազմազան ընկալումների վրա ազդում են բազմաթիվ գործոններ, ինչպես ընդունող երկրի մշակույթն ու միջավայրը, համայնքային կառուցվածքը, կապը Հայաստանի հետ, ծագման վայրը, գաղթի պատճառը և պատմությունը, սերնդափոխությունը, ինչպես նաև սոցիալ-ժողովրդագրական բնութագրիչները: Երբեմն նրանց շատ դժվար է պատասխանել՝ «ո՞րն է իրենց հայրենիքը» հարցին:

Ազգային պետության՝ ՀՀ գոյությունը հնարավորություն է տալիս միավորելու հայրենիքի մասին բազմազան պատկերացումները՝ երևակայվող կամ կորուսյալ հայրենիքից դեպի ռացիոնալ հայրենիք, որն ընտրում են ինքնության, քաղաքական, գաղափարական և այլ նկատառումներով: Անհրաժեշտ է ամրապնդել հոգևոր և(կամ) ֆիզիկական կապն այս հայրենիքի հետ, աշխատելով երկու ուղղություններով՝ գաղափարական և ծրագրային: Հայկական Սփյուռքի համայնքներում իրականացված հետազոտությունները ցույց են տալիս դրական *կորելացիա* Հայաստանի հետ կապի և այն որպես հայրենիք ընկալման ու այնտեղ ապրելու մտադրության միջև: Առնչությունները, փոխադարձ կապերը և, հատկապես, այցելությունները ժամանակի ընթացքում ավելի են ամրացնում Հայաստանի՝ որպես հայրենիք ընկալումը: Հայաստան այցելութ-

յունն իրական հուզական կապ է ստեղծում, օգնում է վերագտնելու ինքնությունը, այն ամրացնելու տարրեր է տալիս: Դա են ցույց տալիս նաև դեպի հայրենիք իրականացվող մի շարք ծրագրեր, հատկապես պատանիների ու երիտասարդների համար, ովքեր ինքնության ձևավորման կարևոր փուլում են:

Սակայն սփյուռքյան բազմազանության և տարբերությունների մեջ ընդհանուրը այդ «կորուսյալ ծագմանը» վերադառնալու ցանկությունն է: Սփյուռքի ներկայացուցիչները խմբավորվում են՝ հիշվող կամ երևակայվող «հայրենիքի» շուրջ, օգտագործում են հայրենի մշակույթը, ձևավորում են համայնքներ, որպեսզի վերստեղծեն իրենց կյանքը: Նրանք այդ հայրենիքը վերստեղծում են իրենց առօրեականության և հիշողության մեջ, ազգային խորհրդանիշներ ու խորհրդանշական իրեր պահում անձնական և համայնքային տարածքներում: Բայց հայրենիք վերադարձի առասպելը[5], որ բնորոշ է Սփյուռքին և օգնում է պահելու սփյուռքյան ինքնությունը, կարող է չվերածվել հայրենադարձության՝ առանց պետության կողմից Սփյուռքի նախաձեռնողական քաղաքականության:

Հետազոտությունները ցույց են տալիս Հայաստան մշտական բնակության տեղափոխվելու մտադրություններ՝ տարբեր համայնքներում տարբեր չափով: Սակայն իրականում քչերն են վերադառնում: Սփյուռահայերի հետ հարցազրույցներում հաճախ է նշվում վերադարձի գաղափարը, սակայն դա հաճախ իրական մտադրություն չէ և չի վերածվում գործողության: Նրանցից ոմանք Հայաստանում ձեռք են բերում բնակարան, հողատարածք, բայց մշտական բնակություն չեն հաստատում: Դա նրանց՝ մի օր հայրենիք վերադարձի առասպելի իրագործման, կամ էլ՝ ընդունող երկրում խնդիրների դեպքում այլընտրանք ունենալու վստահություն է տալիս:

Ընդունող երկրի ճգնաժամային իրավիճակում հայրենիքի ընտրությունը դրա դրսևորումներից է: Վերջին տարիներին հայկական տարբեր համայնքներում՝ Լիբանանում, Իրաքում, Սիրիայում, Ուկրաինայում և այլ երկրների պատերազմական, արտակարգ իրավիճակներում հայերը, որպես անվտանգության այլընտրանքային միջավայր, նախընտրում են Հայաստանը՝ գոնե ժամանակավոր: Հայաստան տեղափոխվելով՝ նրանք հիմնականում չեն դրսևորում փախստականի կամ միգրանտի վարքագիծ: Հայտնի է, օրինակ, որ շատ սիրիահայեր հրաժարվում էին փախստականի կարգավիճակ ունենալ՝ չնայած տրվող նյութական արտոնություններին: Նրանց միայն մի մասը ստացավ ՀՀ քաղաքացիություն, մնաց և ինտեգրվեց, մեծամասնությունը արտագաղթեց այլ երկիր: Սակայն սա ավելի շատ Հայաստանի՝ որպես պետության քաղաքականության և ռեսուրսների հարց է:

Հայրենադարձության քաղաքականության և որոշումների կայացման վրա կարող է էական ազդեցություն ունենալ Հայաստանի հանրային և քաղաքական խոսույթը: Միգրացիան, անդրադառնալով հանրային կյանքի շատ ոլորտների (ժողովրդագրական, սոցիալական, կրթական, մշակութային, տնտեսական, քաղաքական, անվտանգային ևն), ռազմավարական նշանակության հարց է, որի շուրջ իրականությունը չարտացոլող քննարկումները կարող են

5 Cohen 2008, 5-7.

հանգեցնել ոչ-համարժեք քաղաքականությունների մշակման: Միգրացիայի խոսույթի մեջ կարևոր է նաև հայկական Սփյուռքի մասնակցությունը: Հանրային, քաղաքական և մեդիա խոսույթները սահմանում են միգրացիայի խնդիրները և որոշում են՝ ինչպես և երբ են դրանք մտնում հանրային և քաղաքական գիտակցության մեջ: Այդ դիսկուրսներն ունեն վճռորոշ նշանակություն, քանի որ դրանք ներգործում են թե՛ ողջ հանրության միգրացիայի ընկալումների, թե՛ միգրացիոն գործընթացները և միգրանտների կյանքը կարգավորող քաղաքականության վրա[6]: Միգրացիայի քաղաքականությունը համարվում է անարդյունավետ՝ առանց միգրացիայի մարտահրավերների դրական ընկալումների[7]: Հետազոտությունները ցույց են տալիս, որ միգրացիոն քաղաքականության մեջ օրենքներից ավելի մեծ ազդեցություն ունեն մեդիա հաղորդագրությունները[8]: Ինչպես ցույց են տալիս միգրացիայի հանրային ընկալումների վերաբերյալ 2012-2014թթ. Գելափի հանրային կարծիքի համաշխարհային հարցումները (որն ընդգրկել է ավելի քան 140 երկրներ), միգրացայի դրական ու բացասական ընկալումների և իրականացվող քաղաքականության ու մեդիա հաղորդագրությունների կապը[9]: Ըստ հանրային կարծիքի հարցման՝ լինելով ԱՄՆ առաջնահերթ խնդիրներից, ներգաղթի վերաբերյալ դիրքորոշումը և հանրային կարծիքը մեծ ազդեցություն ունի միգրացիոն քաղաքականության վրա[10]:

Հայաստանում, անկախությունից ի վեր, առկա են միգրացիոն մեծ տեղաշարժեր՝ ներգաղթի կամ հայրենադարձության հոսքեր, շարունակական արտագաղթ Հայաստանից, աշխատանքային միգրացիա և այլ տեղաշարժեր: Բոլոր միգրացիոն գործընթացներն առաջացրել են հիմնահարցի վերաբերյալ քննարկումներ և ընկալումներ: Սակայն Հայաստանում հատկապես քննարկվում է արտագաղթի խնդիրը: Հանրային կարծիքի տարբեր հարցումներում արտագաղթը դիտարկվում է որպես երկրի առջև ծառացած հիմնական խնդիրներից մեկը՝ գործազրկության, աղքատության, անվտանգության, կոռուպցիայի և այլ խնդիրների շարքում: Հաշվի առնելով նաև պոտենցիալ միգրացիայի բարձր աստիճանը և հայկական Սփյուռքի առկայությունն ու ներգաղթի հնարավորությունները՝ մեծանում է խնդրի հանրային ընկալման կարևորությունը: Քաղաքական խոսույթում պետական կառավարման պատասխանատուները, իշխանությունները խուսափում են միգրացիայի իրական պատկերի և մարտահրավերների քննարկումից, ինչպես նաև իրականացվող բարեփոխումների կամ ծրագրերի հիմքում չեն նշում կապը դրա հետևանքների հետ: Հաճախ նշվում է արտագաղթի դրական հետևանքների մասին, ինչպիսիք են՝ դրամական փոխանցումները, միգրանտների որակավորման բարձրացումը, տնտեսական հաջողությունները, Սփյուռքի համալրումը և օգնությունը Հայաստանին, ՀՀ-ում սոցիալական լարվածության մեղմացումը ևն: Տեղի ունի նաև հակառակը՝ խոսել հայրենադարձության մասին (անգամ զանգվածային հայրենադար-

6 Power et al. 2016.

7 Beutin et al. 2006.

8 Menjivar 2016.

9 How the World Views Migration, Forthcoming IOM report based on data from the Gallup World Poll, IOM Migration Research Division, Geneva, January, 2015.

10 Suro 2009.

ձության), չունենալով մշակված քաղաքականություններ և թիրախային ծրագրեր: Չնայած այն հանգամանքին, որ նման հայտարարությունները կարող են լավատեսական սպասումներ առաջացնել Հայաստանում և Սփյուռքում, սակայն լինելով անիրատեսական՝ ժամանակի ընթացքում կարող են վերածվել հիասթափության:

Միգրացիոն քաղաքականությունը ՀՀ-ում

ՀՀ միգրացիոն քաղաքականությունը սահմանող փաստաթղթերը և օրենսդրական կարգավորումները հստակորեն չեն սահմանում Սփյուռքի դերը և չեն տարանջատում հայրենադարձությունը ներգաղթի քաղաքականության մեջ: Այսպես, «ՀՀ միգրացիայի քաղաքականության 2017-2021 թթ. ռազմավարությունը»[11] փաստաթղթում *Սփյուռք* եզրը կիրառվում է երեք անգամ. երկու անգամ՝ որպես արտագնա աշխատանքի մեկնող քաղաքացիների իրավունքների և շահերի պաշտպանության համար սփյուռքյան կազմակերպությունների հետ համագործակցություն, և մեկ անգամ՝ ներածության մեջ շեշտելով Սփյուռքի կարողությունների արդյունավետ օգտագործման կարևորությունը: Այնուհետև «ՀՀ միգրացիոն քաղաքականության՝ ինտեգրման և վերաինտեգրման խնդիրների կարգավորման 2021-2031 թթ. ռազմավարությունը»[12] ընդհանրապես չի անդրադառնում Սփյուռքին կամ հայրենադարձությանը՝ որպես միգրացիայի տարատեսակ: «*Սույն ռազմավարության շրջանակներում էթնիկ ծագումը չի դիտարկվել՝ որպես թիրախ խմբերի ձևավորման սզբունք՝ հնարավոր խտրականությունից խուսափելու համար: Արդյունքում սփյուռքահայերը, սույն ռազմավարության շրջանակում հատուկ չեն թիրախավորվել: Թեև, կախված իրենց միգրացիոն կարգավիճակից, նրանք կարող են ընդգրկվել վերոնշյալ գրեթե բոլոր խմբերում՝ այնուամենայնիվ, հայրենադարձության խթանման և հայրենակիցների ինտեգրման առակցության տեսանկյունից նպատակահարմար է ձեռնարկել հատուկ նրանց թիրախավորող ծրագրեր*»,- գրված է նշյալ ռազմավարության 29-րդ կետում: Փաստորեն, հայրենադարձության (ենթադրյալ) քաղաքականությունը, «Հայրենադարձության մասին» օրենքը և այլ կարգավորումներ հետագայում հայտնվելու են հակասությունների մեջ՝ վերոնշյալ ռազմավարության և դրանից բխող ծրագրերի հետ: Ռազմավարությունն ինտեգրման և վերինտեգրման համար սահմանում է վեց թիրախային խմբերի կարիքները՝ օտարերկրացիներ, վերադարձողներ, ներքին տեղահանված անձինք, ապաստան հայցողներ, փախստականներ, հարկադիր տեղահանվածների իրավիճակում գտնվող անձինք: Հայրենադարձի իրավական կարգավիճակն արտացոլված չէ այս քաղաքականության մեջ: Իսկ հայրենադարձության առանձին քաղաքականություն ՀՀ կառավարությունը դեռևս չի մշակել:

11 ՀՀ միգրացիայի քաղաքականության 2017-2021 թթ. ռազմավարություն, https://www.irtek.am/views/act.aspx?aid=89250 (5.02.2024):

12 ՀՀ միգրացիոն քաղաքականության՝ ինտեգրման և վերինտեգրման խնդիրների կարգավորման 2021-2031 թթ. ռազմավարություն, https://www.e-draft.am/projects/2298/about (5.02.2024):

Սփյուռքի վերաբերյալ քաղաքականությունը ՀՀ-ում

Սփյուռքի քաղաքականության շրջանակը սահմանող առկա փաստաթղթերն են՝ ՀՀ կառավարության (2021-2026) ծրագիրը[13], «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծը[14], որոնցում սահմանված են Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գործառույթները:

Հայաստանում 2018-ի իշխանափոխությունից հետո ներքաղաքական փոփոխությունների համատեքստում քննարկումներ ծավալվեցին նաև Սփյուռքի նոր քաղաքականության շուրջ: Սակայն Սփյուռքի նոր քաղաքականության մշակման և իրագործման համար հետագա գործնական քայլերը սկսեցին չհամապատասխանել քաղաքական խոսույթին: Այս ընթացքում մշակված քաղաքականության փաստաթղթերը, իրականացնող կառույցների և գործառույթների սահմանումը ավելի են նեղացնում Հայաստան-Սփյուռք հարաբերությունները, մինչդեռ քաղաքական հայտարարությունները հակառակի մասին են: Այս խզվածքն առավել ակնառու դարձավ 2020թ. Արցախյան պատերազմից և 2023թ. Արցախի հայաթափումից (փաստացի կորստից հետո):

Նոր կառավարության 1-ին ծրագրում (2018թ.) «Հայաստան-Սփյուռք կապեր» բաժինը հպանցիկ անդրադառնում է Սփյուռքի հետ հարաբերություններին: Որպես առաջնահերթություններ նշվում են (խմբ.)՝ ա) հայության մարդկային, ֆինանսական, տնտեսական, մտավոր ներուժի կենտրոնացում Հայաստանում, բ) Սփյուռքի ներուժը ՀՀ կառավարման համակարգում ներգրավելու արգելքների վերացում, գ) հայկական համայնքներում հայապահպանության գործում Սփյուռքի ջանքերի և դերի կարևորում, դ) մեծ հայրենադարձության հարուցում: Այստեղ կառավարության դերը միայն երևում է Սփյուռքի ներուժը այդ համակարգում ներգրավելու օրենսդրական կարգավորման մեջ: Մյուս կետերը բավականին վերացական են կամ առանց կառավարության հանձնառության: Ամենավիճելին հայրենադարձության հարցն է՝ առանց համապատասխան ռազմավարության կամ ծրագրի:

Հաջորդ պաշտոնական փաստաթուղթը «Իմ քայլը» դաշինքի նախընտրական ծրագիրն է, որում Սփուռքին վերաբերող հատվածը ներկայացված է բավական մանրամասն և մշակված՝ ի համեմատություն կառավարության ծրագրերի: Ինչպես նաև, այլ բաժինների մեջ նույնպես անդրադարձ կա Սփյուռքին: Ծրագրում «Ուժեղ Հայաստան, ուժեղ սփուռք» վերտառությամբ բաժինը հավանաբար փոխառվել է «Սփյուռքի քաղաքականության ռազմավարության հայեցակարգ» նախագծից[15]: Ընդհանուր առմամբ, երևում է Սփյուռքի քաղաքականության այդ հայեցակարգի ազդեցությունը ծրագրում Սփյուռքի բաժնի մշակման վրա: Այստեղ կան Հայրենիք-Սփյուռք կապի ամրապնդման և հայրե-

13 ՀՀ կառավարության (2021-2026) ծրագիր, https://www.gov.am/files/docs/4586.pdf (5.02.2024):

14 Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծ, https://www.e-draft.am/projects/1503/about?fbclid=IwAR2JlV7IR776A4SFfn9ADXaGAt5ajOBLGGq0iwqV8eGukAHETQvsaMa1emQ (5.02.2024):

15 Սփյուռքի քաղաքականության ռազմավարության հայեցակարգ, https://old.hayernaysor.am/cl/archives/299811 (5.02.2024):

նիքի զարգացման կարևոր, մինչև այդ որևէ տեղ չարտացոլված շեշտադրումներ և քաղաքականության ուղղություններ, ինչպիսիք են՝ ա) Սփյուռքի ներուժի բացահայտմանն ուղղված հետազոտությունները, ներուժի քարտեզագրում ու ներգրավում, բ) սփյուռքահայերի՝ ՀՀ-ում ներկայացվածության *ինպտիպուցիոնալացում* և կառավարման համակարգում ներգրավելու արգելքների վերացում, գ) Սփյուռքի ուժեղացմանն ուղղված ծրագրերի իրականացում, դ) Հայաստանի անվտանգության ու զարգացման նպատակների համար Սփյուռքի ներուժի հավաքագրում, ե) հայրենադարձության կազմակերպման ծրագրերի մշակում:

Հարկ է նշել, որ այս ժամանակահատվածում բուն Սփյուռքի քաղաքականության միակ փաստաթուղթը հենց վերոնշյալ՝ «Սփյուռքի քաղաքականության ռազմավարության հայեցակարգ. նախագիծն»[16] է, որը հրապարակվել է խորհրդարանական ընտրություններից օրեր առաջ և զարմանալիորեն այդպես էլ չի դրվել հանրային քննարկման և հետագա որոշումների կայացման հիմքում: Հայեցակարգի միակ գործածումը կարելի է տեսնել «Իմ քայլը» դաշինքի նախընտրական ծրագրի Սփյուռքին վերաբերող բաժնում:

ՀՀ կառավարության հաջորդ ծրագրում (2019թ.) «Սփյուռքի հետ կապեր» անվանմամբ ենթաբաժնում սահմանվում է չորս ուղղություն (խմբ.)՝ 1) գիտական, մասնագիտական, կրթամշակութային, տնտեսական և այլ ոլորտներում համահայկական ցանցերի ստեղծում և զարգացում, 2) Հայաստանի զարգացման մեջ Սփյուռքի ներուժի ներգրավում և հանրային կյանքում մասնակցություն, Հայաստան-ընդունող երկիր հարաբերություններում Սփյուռքի դերի մեծացում, 3) հայրենադարձության խթանում և ՀՀ-ում սփյուռքահայերի ինտեգրման աջակցություն, 4) սփյուռքյան կառույցների ամրապնդման և համահայկական խնդիրների լուծման գործում նրանց դերի կարևորում, Սփյուռքի ներկայացուցչական կազմակերպություն ստեղծելու ուղղությամբ ջանքերի գործադրում: Ծրագրի յոթ տարբեր մասերում ուղղակի կամ անուղղակի անդրադարձ կա Սփյուռքին:

Արդեն խորհրդարանական ընտրություններից հետո՝ 2019 թ. Սփյուռքի նախարարությունը միացվում է Վարչապետի աշխատակազմին՝ ստեղծվում է Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակ: Հանձնակատարի լիազորություններն են՝ 1) համակարգել համահայկական ցանցերի ստեղծման և զարգացման քաղաքականությունը, 2) Հայաստան-Սփյուռք գործակցության համար առաջարկություններ ներկայացնել Վարչապետին հետևյալ ուղղություններով. ա) հայրենադարձության և Հայաստանում սփյուռքահայերի ինտեգրման, բ) համահայկական կառույցների ամրապնդման և համահայկական խնդիրների լուծման գործում նրանց դերակատարության բարձրացման, գ) Սփյուռքի ներուժի թիրախային օգտագործման և լիարժեք նպատակային ներգրավման, դ) ինքնության պահպանման աջակցության վերաբերյալ, 3) համակարգել Սփյուռքի բազմազան համայնքների կարիքների բավարարմանն ուղղված քաղաքականության իրականացման ծրագրերը, 4) իրականացնել

16 Ռազմավարության նախագիծը մշակվել է ՀՀ Սփյուռքի նախարար Մխիթար Հայրապետյանի, նախարարի խորհրդական Վահե Սահակյանի (սփյուռքագետ, Միչիգանի համալսարան) կողմից և մի շարք հեղինակավոր սփյուռքագետների խորհրդատվությամբ:

Հայաստանի հանրային կյանքի կազմակերպման գործում Սփյուռքի մասնակցության ապահովմանն ուղղված պետական և այլ ծրագրերի մշտադիտարկումը: Նույն օրենքով Վարչապետը կարգավորում է Սփյուռքի հետ կապված քաղաքականությունը: Սակայն որևէ տեղ չի նշվում հանձնակատարի գրասենյակի՝ Սփյուռքի քաղաքականության մշակման և իրագործման գործառույթը: Կարելի է ենթադրել, որ Վարչապետն անձամբ՝ ըստ հայեցողության կհանձնարարի Սփյուռքի հետ հարաբերությունների առաջնահերթությունները, այդպիսով՝ ինստիտուցիոնալ մոտեցումները փոխարինելով անձի/կառույցի որոշումներով:

Կառավարության գործող՝ 2021-2026 ծրագրի «Սփյուռքի հետ կապեր» բաժնում անդրադարձ է արվում Սփյուռքի հետ հարաբերությունների առաջնահերթություններին, ինչն, իհարկե, համապարփակ և լիարժեք չէ:

Հայրենադարձության քաղաքականությունը ՀՀ-ում

2018 թ. քաղաքական իրադարձություններից հետո ակտիվացան նաև հայրենադարձության մասին քննարկումներն ու ակնկալիքները Հայաստանում և Սփյուռքում: Նոր իշխանությունների հանրային ելույթները ցույց են տալիս, որ նրանք լիահույս են ներգաղթի հարցում՝ Հայաստանում տեղի ունեցող ոգևորիչ գործընթացների, փոփոխությունների խորապատկերին: Ավելին, նոր ձևավորված կառավարության առաջին ծրագրում, ինչպես նաև 2018-ի խորհրդարանական արտահերթ ընտրություններին «Իմ քայլը» դաշինքի ծրագրում հստակ էր հայրենադարձության խթանման և կազմակերպման հանձնառությունը: Սակայն հետագայում Կառավարության գործողությունները այս ուղղությամբ նախաձեռնողական մոտեցման չվերածվեցին՝ մնալով հայտարարությունների, կոչերի ու ցանկությունների մակարդակով:

Այսօր հայրենադարձության գործում պետության հանձնառությունը արտահայտվում է երկու փաստաթղթերում. 1) ՀՀ կառավարության 2021-2026 թթ. ծրագրում և 2) Հայաստանի մինչև 2050 թ. վերափոխման ռազմավարության մեջ[17]: Վերջինս ունի առանձին նպատակ՝ Մեծ հայրենադարձություն և ինտեգրում: Փաստաթուղթն ինքնին Հայաստանի հետ Սփյուռքի կապվածության և համայնքների ուժեղացում, համահայկական լայն ներգրավվածություն: Կառավարության ծրագրում հայրենադարձությանն անդրադարձ է կատարվում մեկական անգամ երեք բաժիններում՝ ա) Սփյուռքի հետ կապեր. «*Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացումը նպատակաուղղված է լինելու հայ ինքնության պահպանմանը, հայրենադարձությանն ու Հայաստանում սփյուռքահայերի ինտեգրմանը, …*», բ) Ժողովրդագրություն. «*Թիրախային ծրագրեր են մշակվելու նաև հայրենադարձ ընտանիքների համար*», գ) Միգրացիա. «*… հայրենադարձության խթանմանն ուղղված գործողությունների կատարման ապահովում*»:

Հայրենադարձության քաղաքականությունները սահմանող այլ մեխանիզմներից մշակվել, սակայն դեռ օրենքի ուժ չի ստացել «Հայրենադարձության մասին» օրենքի նախագիծը[18]: Հարկ է նշել, որ, չնայած օրենքի ընդունման, իրա-

17 Հայաստանի՝ մինչև 2050 թ. վերափոխման ռազմավարություն, (5.02.2024): https://www.primeminister.am/u_files/file/Haytararutyunner/Armenia2050_7_5.pdf

18 «Հայրենադարձության մասին» օրենքի նախագիծ, http://www.parliament.am/drafts.

վական կարգավորումների կարևորությանը, այն ինքնին չի կարող դառնալ հայրենադարձության շարժառիթ, խրախուսիչ հանգամանք: 2023 թ. բացվել է Հայրենադարձության և ինտեգրման կենտրոն: Այն գործում է որպես միասնական ռեսուրս-կենտրոն հայրենադարձների համար: Կենտրոնի նպատակն է՝ աջակցել հայրենադարձների արդյունավետ ինտեգրման գործընթացին և ակտիվ ներգրավմանը ՀՀ հասարակական-քաղաքական, մշակութային ու սոցիալ-տնտեսական կյանքին[19]: Սակայն կենտրոնը չի զբաղվում հայրենադարձության կազմակերպմամբ կամ խթանման աշխատանքներով, այլ ծառայություններ է տրամադրում տարբեր պատճառներով Հայաստան հայրենադարձվածներին:

ՀՀ կառավարությունը, մի կողմից, հայտարարում է հայրենադարձության կարևորության, մտադրությունների և հանձնառության մասին, մյուս կողմից՝ դեռևս ակնհայտ չէ հոչակվող մոտեցման հենքը՝ քննարկումների, ծրագրերի, ռազմավարության, քաղաքականության փաստաթղթերի մշակման և այլ ձևերով: Հայրենադարձության նշանակալի հոսքեր կարող են տեղի ունենալ միայն պետական քաղաքականության և մշակած ռազմավարության առկայության պարագայում:

Պետք է ի նկատի առնել այն իրողությունը, որ Հայաստանը դեռևս շարունակում է մնալ արտագաղթի գերակշռությամբ երկիր՝ Սփյուռքի հայաշատ համայնքների ընդունող երկրների ճնշող մեծամասնության սոցիալ-տնտեսական պայմանների հետ անմրցունակ դիրքում: Հետևաբար, քիչ հնարավոր է թվում սոցիալ-տնտեսական իրավիճակի բարելավման հիմքով ներգաղթի հոսքեր ապահովելը: Այստեղ առաջ է գալիս ծրագրային-գաղափարական մոտեցման, Սփյուռքի լայն ներգրավման միջավայրեր և պայմաններ ստեղծելու անհրաժեշտությունը: Ներգաղթի տեսանկյունից գրավիչ երկիր չլինելու հանգամանքը պարտադրում է ունենալ պետական նախաձեռնողական քաղաքականություն:

Արտակարգ իրավիճակներում սփյուռքահայերի ներգաղթը Հայաստան և նրանց ինտեգրման փորձը ցույց են տալիս, որ պետությունը պատրաստ չէր ընդունելու, տեղավորելու և ինտեգրելու այդքան ներգաղթյալների՝ ոչ միայն երկրի օբյեկտիվ սոցիալ-տնտեսական և այլ պատճառներով, այլև նման իրավիճակների համար *ինստիտուցիոնալ* հիշողության (հայրենադարձության դեպքերի ուսումնասիրության հիման վրա) և ռազմավարության բացակայության հետևանքով:

Քննարկում

Ակնհայտ է, որ միգրացիայի, Սփյուռքի և հայրենադարձության քաղաքականությունների միջև հստակություն մտցնելու անհրաժեշտություն կա: Կա՛մ պետք է համակարգված աշխատանք պատասխանատու գերատեսչությունների միջև՝ ունենալով միասնական քաղաքականություն, կա՛մ պետք է տարանջատել միգրացիոն և Սփյուռքի և (կամ) հայրենադարձության քաղաքականությունները՝ չթողնելով հակասական, վիճելի կամ փոխադարձ պատասխանատվության դաշտ տեղափոխող հարցեր: Կարևոր է այս հակասությունները

---

php?sel=showdraft&DraftID=5019&Reading=0&lang=arm&enc=utf8 (5.02.2024):

19 Հայրենադարձության և ինտեգրման կենտրոն, http://diaspora.gov.am/hy/programs/38 (5.02.2024):

հարուցող հարցադրումների լուծումը: Ինտեգրման քաղաքականության մեջ միգրանտների վերոնշյալ վեց կատեգորիաների համար հատկացվող ծրագրերն ու փաթեթները, հակասության մեջ հայտնվելով հայրենադարձի իրավական կարգավիճակի համար սահմանվող ինտեգրման ծրագրի հետ կարող են խաթարել հասարակության սոցիալական համերաշխության, հավասարության և արդարության կարևոր սկզբունքները:

Մեծ կարևորություն տալով Հայաստանի զարգացման համար Սփյուռքի ներառմանը և ժողովրդագրական իրավիճակի բարելավման գործում ներգաղթի հատուկ քաղաքականությանը՝ միգրացիոն քաղաքականության և ինտեգրման ռազմավարության մեջ էական նշանակություն ունի Սփյուռքի գործոնի լայն ներառումը, ինչպես նաև ժողովրդագրական կարիքներին ուղղված ինտեգրման ծրագրերի ներառումը:

Եզրահանգումներ

Հիշվող և երևակայվող հայրենիքն ու վերադարձի առասպելը սփյուռք լինելու և ինքնությունը վերակառուցելու կարևոր բաղադրիչներն են: Սակայն այս խորհրդանշական վերադարձն ինքնին չունի իրական հայրենադարձության ներուժ: Հաճախ հենց հայրենիքներն են նախաձեռնում հայրենակիցների վերադարձը՝ ելնելով երկրի անվտանգային, ժողովրդագրական, մշակութային, կրոնական, քաղաքական և այլ պահանջներից: Խորհրդային Հայաստան Մեծ հայրենադարձությունը դրա վառ օրինակն է, երբ պետությունը նախաձեռնեց հարյուր հազարավոր հայրենակիցների վերադարձը, ովքեր Ցեղասպանության հետևանքով ցրված առաջին սերունդներն էին՝ Էրգիր վերադարձի մեծ երազանքով:

Այսօր, երբ ՀՀ-ը կանգնած է լուրջ մարտահրավերների առջև, առավել քան արդիական է ունենալ իր զարգացման համար կարևորագույն ռեսուրսի՝ Սփյուռքի մարդկային, սոցիալական ու ֆինանսական կապիտալի ներառման ռազմավարություն: Ինչպես ցույց է տալիս մեր ուսումնասիրությունը, ինչպես նաև՝ սփյուռք ունեցող այլ երկրների փորձի ուսումնասիրումը, այս հարցում հնարավոր չէ ակնկալել ցանկալի արդյունքներ:

Հայրենադարձության կամ վերադարձի հարցում պետությունը կրում է իրավական և բարոյական պատասխանատվություն: Հետևաբար, նախ՝ պետությունն ինքը պետք է պատրաստ լինի ընդունելու ներգաղթի հոսքեր՝ հաղթահարելով խոչընդոտները, ստեղծելով համապատասխան պայմաններ և միջավայր, ապա՝ պետք է թիրախավորված աշխատանքներ իրականացնի Սփյուռքի համապատասխան համայնքների հետ: Նման աշխատանքները հնարավոր չէ համակարգված իրականացնել առանց հատուկ քաղաքականության և ռազմավարության, որոնք կսահմանեն հայրենադարձության գործընթացի ուղենիշերը: Դրանք կարելի է խմբավորել հետևյալ ուղղություններում.

- հայեցակագային մոտեցումների և հասկացությունների սահմանում,
- գաղափարական հենքի մշակում, Սփյուռքին մոտիվների և գաղափարների փոխանցում,
- կարիքների գնահատում Հայաստանում և Սփյուռքում,
- Սփյուռքի համայնքների դասակարգում՝ ըստ հայրենադարձության հավանականության և ռիսկի գործոնների,

- թիրախավորված ծրագրերի կազմում՝ տարբեր համայնքների, ՀՀ տարբեր մարզերի և ներգրավման ոլորտների համար,
- հայրենադարձների ինտեգրման ծրագրերի կազմում,
- տարբեր ոլորտներում ինտեգրման խոչընդոտների սահմանում և դրանց հաղթահարման ուղիների որոնում,
- արտոնությունների շրջանակների սահմանում,
- օրենսդրական, իրավական կարգավորումների մեխանիզմների հստակեցում,
- մշակութային բազմազանության, ներառական միջավայրի ստեղծում,
- ֆինանսական միջոցների ներգրավման ուղիների մշակում,
- օժանդակող ենթակառուցվածքների և ինստիտուտների ստեղծում,
- ՀՀ միգրացիոն, Սփյուռքի և հայրենադարձության քաղաքականությունների հարմարեցում:

Առանց նման համալիր մոտեցման՝ առանձնաբար իրագործված ծրագրերը կամ նախաձեռնությունները դատապարտված են ձախողման կամ անարդյունավետության:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

BEUTIN 2006
Migration and Public Perception (Ed-s.: Beutin R., Canoy M., Horvath A., Hubert A., Lerais F., Smith P., Sochacki M.), Report, Bureau of European Policy Advisers (BEPA), European Commission, 2006, 41 p.

COHEN N. 2015
Cohen N., A Web of Repatriation: The Changing Politics of Israel's Diaspora Strategy // Population, Space and Place, 2015, Vol. 22, Issue 3, 288-300.

COHEN R. 2008
Cohen R., Global Diasporas, Routledge, London and New York, 2008.

FAHRENTHOLD 2022
Fahrenthold S., Return migration and repatriation: Myths and realities in the interwar Syrian mahjar // Middle Eastern Diasporas, Routledge, 2022, 301-315.

GOLDSTEIN 2014
Goldstein L., Repatriation: Overview // Encyclopedia of Global Archaeology (Ed. C. Smith), NY, Springer, 2014, 6327–6335.

MENJIVAR 2016
Menjivar C., Immigrant Criminalization in Law and the Media: Effects on Latino Immigrant Workers Identities in Arizona, American Behavioral Scientist, 2016.

POWER et al. 2016
Public and Political Discourses of Migration: International Perspectives (Ed-s.: Power M.J., Devereux E., Dillane A., and Carr J), London, Rowman & Littlefield International, 2016, 302 p.

SURO 2009
Suro R., America's Views of Immigration: The Evidence from Public Opinion Survey, Migration Policy Institute, 2009.

Syuzanna S. Barseghyan
Ph.D.

MAIN ISSUES OF ARMENIA'S REPATRIATION POLICY IN THE CONTEXT OF CONTEMPORARY REALITIES

Keywords: repatriation, migration, diaspora, homeland, nation-state, policy.

Nation-states include or exclude certain groups or individuals into the state through migration policies, legal regulations and citizenship laws, and other means, transforming the boundaries of the nation and national identity. Repatriation has a special place in the regulation of migration flows, which is one of the forms of immigration encouraged and supported by the state. In international law the policy of repatriation is considered as the implementation of one of the fundamental human rights - the "right of return", to move to a territory of country that he considers his homeland. Currently several dozen countries are implementing repatriation policies or have developed legislative regulations for this process.

Repatriation is especially important for developing countries with diaspora population. It's also significant to engage the human, social and financial capital of the diaspora in Armenia for the country's development. If for other countries the main goal of repatriation may be ensure the dominance of the titular nation in the ethnic and/or religious composition of the state or political significance, then for Armenia - as a mono-ethnic country the main tasks of repatriation can be considered mainly from the point of view of national security and demographic, economic, social, and cultural development. However, the seemingly simple process of returning to a "place of origin" or homeland (ethnic homeland) is itself difficult to define and requires policies, legal frameworks and integration programs.

The purpose of the presented article is to comprehensively analyze main issues of the repatriation policy of the Republic of Armenia in the context of the realities occurring in Armenia, the Armenian diaspora and the globalized world. The study examines possible scenarios for repatriation from the Armenian diaspora in various circumstances, intentions for repatriation, perceptions of the homeland and nation-state in various communities, opportunities and obligations for repatriation in Armenia, as well as other factors that are important in determining the main directions of repatriation policy. The study was based on data from quantitative and qualitative research conducted in Armenian communities by the Department of Diaspora Studies of the Institute of Archaeology and Ethnography NAS RA, analysis of policy documents and discourse, as well as desk research.

Сюзанна Сосовна Барсегян

к.и.н

ОСНОВНЫЕ ПРОБЛЕМЫ ПОЛИТИКИ РЕПАТРИАЦИИ АРМЕНИИ В КОНТЕКСТЕ СОВРЕМЕННЫХ РЕАЛИЙ

Ключевые слова: репатриация, миграция, диаспора, родина, национальное государство, политика.

Посредством миграционной политики, правовых регуляций и законов о гражданстве национальные государства включают или исключают те или иные группы или личности в состав государства, трансформируя границы нации и национальной идентичности. В регуляциях миграционных потоков особое место занимает репатриация, которая является одной из форм иммиграции, поощряемой и поддерживаемой государством. В международном праве политика репатриации рассматривается как реализация одного из основополагающих прав человека – «права на возвращение», перемещение в страну или на территорию, которую он считает своей родиной. В настоящее время несколько десятков стран осуществляют политику репатриации или выработали законодательные регуляции этого процесса. Репатриация особенно важна для развивающихся стран, обладающих диаспорой. Привлечение человеческого, социального и финансового капитала диаспоры также имеет особое значение для развития Армении. Если для других стран основной целью репатриации является обеспечение доминанты титульной нации в этническом и/или конфессиональном составе государства, политическое значение, то для Армении, как моноэтнической страны, основные задачи репатриации можно рассматривать главным образом с точки зрения национальной безопасности и демографического, экономического, социально-культурного развития. Однако, казалось бы, простой процесс возвращения в «место происхождения» или на родину (этническую родину) сам по себе трудно поддается определению и нуждается в политике, правовых основах и программах интеграции.

Цель представленной статьи – комплексно проанализировать проблемы репатриационной политики РА в контексте реалий, происходящих в Армении, армянской диаспоре и глобализированном мире. В исследовании рассматриваются возможные сценарии репатриации из армянской диаспоры, находящейся в различных обстоятельствах, намерения репатриации, восприятие родины и национального государства в различных общинах, возможности и обязательства репатриации в Армении, а также другие факторы, которые важны для определения основных направлений политики репатриации. Основой исследования послужили данные количественного и качественного исследования, проведенного в армянских общинах Отделом исследований диаспоры Института археологии и этнографии НАН РА, анализ программных документов, дискурс анализ, а также вторичный анализ данных.

Ներկայացվել է՝ 22.01.2024
գրախոսվել է՝ 20.08.2024
ընդունվել է տպագրության՝ 30.09.2024

ՀԵՂԻՆԱԿՆԵՐ

Աբրահամյան Հասմիկ Աբելի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի գիտաշխատող
hasmikabrahamyanihasce@gmail.com

Աթանեսյան Գարիկ Հրահատի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի գիտաշխատող
atanesyangarik@gmail.com

Անգելուշ Լուսինե Միքայելի
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի ավագ լաբորանտ
lusineangelush@gmail.com

Ասատրյան Հռիփսիմե Գարիկի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Բանագիտության բաժնի գիտաշխատող
hripetnos@mail.ru

Բարսեղյան Սյուզաննա Սոսի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի ուսումնասիրության բաժնի ավագ գիտաշխատող
syuzanna.barseghyan@gmail.com

Գալստյան Միհրան Վարդգեսի
պատմական գիտությունների դոկտոր, դոցենտ
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի վարիչ, առաջատար գիտաշխատող
akoonk@yahoo.com

Գալստյան Նարե Միհրանի
Սոցիոլոգիական գիտությունների թեկնածու
ԱՄՆ Սիրակուզայի համալսարանի Բերթոն Բլատի ինստիտուտի ավագ հետազոտող
nare.galstyan@gmail.com

Խաչատուրյան Նելլի Ռաֆիկի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի ուսումնասիրության բաժնի գիտաշխատող
nelli.khachaturyan02@gmail.com

Կարապետյան Ռուբեն Սուրենի
պատմական գիտությունների դոկտոր
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի ուսումնասիրության բաժնի վարիչ, առաջատար գիտաշխատող
karapetyan.ruben.s@gmail.com

Հակոբյան Գայանե Լևոնի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի գիտաշխատող
gayik20@gmail.com

Հարությունյան Մարիամ Բագրատի
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի ուսումնասիրության բաժնի ավագ լաբորանտ
mariam-harutyunyan-00@mail.ru

Հովսեփյան Ռոման Աղասու
կենսաբանական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Հնակենսաբանության և էթնոկենսաբանության գ/հ խմբի ղեկավար
roman.hovsepyan@iae.am

Մարկոսյան Սալվինե Հակոբի
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի ուսումնասիրության բաժնի կրտսեր գիտաշխատող
salvi.markosyan@gmail.com

Ներսիսյան Սոնա Արայիկի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի ուսումնասիրության բաժնի ավագ գիտաշխատող
sona.nersisyan2006@gmail.com

Պողոսյան Սվետլանա Հայկի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Մշակութային մարդաբանության բաժնի ավագ գիտաշխատող / Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարանի փոխտնօրեն
svethnomuseum@yahoo.com

Վարդանյան Մակիչ Աշոտի
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի ավագ լաբորանտ
makich1639@gmail.com

Տանաջյան Լուսինե Ասատուրի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի ուսումնասիրության բաժնի ավագ գիտաշխատող
lusine.tanajyan@gmail.com

Տիգրանյան Արմինե Հարությունի
ԵՊՀ Մշակութաբանության ամբիոնի դասախոս
armine.tigranyan@ysu.am

Օհանջանյան Ռուբեն Սամվելի
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի գիտաշխատող
r.ohanjanyan@mail.ru

CONTENTS

I. GLOBALIZATION AND MIGRATION PROCESSES

Mihran Galstyan
To stay or to leave? Exploring the socio-cultural issue of potential emigration from Armenia 8

Lusine Tanajyan
The experience of integration of ethnic Armenian and non-Armenian immigrants in Armenia: comparative aspects 24

Sona Nersisyan
Armenia in the perceptions of Russian immigrants 37

Syuzanna Barseghyan
Main issues of armenia's repatriation policy in the context of contemporary realities 49

II. IMMIGRANTS AND DISPLACED PEOPLE. THE SOCIAL-CULTURAL LANDSCAPE OF ARMENIA

Gayane Hakobyan
"Aleppo market" as a micro-model of the entrepreneurial activity of Syrian-Armenians 66

Garik Atanesyan
Authencity discurse and staged heritage in post-Soviet Armenian tourism practices 78

Armine Tigranyan
Restrictions on participation in the cultural life of violently displaced Armenians by Azerbaijan: the example of Artsakh's Hadrut region 89

III. EDUCATION AND GLOBALIZATION

Ruben Ohanjanyan
Some issues of changing trends in professional cultural values in the context of globalization in the Republic of Armenia 114

Lusine Angelush
Language policy of the Republic of Armenia in modern conditions 124

Makich Vardanyan
Globalization discourse in the Armenian mass media: the context of educational problem 139

IV. TRADITIONAL AND MODERN FACTORS IN SOCIAL-CULTURAL TRANSFORMATIONS

Svetlana Poghosyan
Clothing as a socio-psychological indicator of Soviet- and post-Soviet Armenian society 158

Hasmik Abrahamyan
Roman Hovsepyan
The ethno-cultural role of food in the cyrcle of migration (preliminary study based on the materials recorded in Syunik region, Armenia) 174

V. DIASPORA ISSUES

Ruben Karapetyan
The problem of involving Armenians in the community structures of the Diaspora 190

Nare Galstyan
Perceptions of homeland in the armeniam community of Los Angeles 204

Nelli Khachaturyan
Salvine Markosyan
Mariam Harutyunyan
Ethnoreligious reconversion in the context of globalization (the experience of the Indian, Turkish and Irish diasporas) 218

VI. REPORT

Hripsime Asatryan
Some modern manifestations of children's folklore 238

VII. REVIEW 248

INFORMATION ABOUT AUTHORS 263

СОДЕРЖАНИЕ

I. ГЛОБАЛИЗАЦИЯ И МИГРАЦИОННЫЕ ПРОЦЕССЫ

Мигран Галстян
Остаться или уехать? О социокультурной проблеме возможной новой эмиграции из Армении 8

Лусине Танаджян
Опыт интеграции иммигрантов-армян и иммигрантов других национальностей в Армении: сравнительные аспекты 24

Сона Нерсисян
Армения в восприятиях российских иммигрантов 37

Сюзанна Барсегян
Основные проблемы политики репатриации Армении в контексте современных реалий 49

II. ИММИГРАНТЫ И ПЕРЕМЕЩЕННЫЕ ЛИЦА. СОЦИАЛЬНО-КУЛЬТУРНЫЙ ЛАНДШАФТ АРМЕНИИ

Гаяне Акопян
“Рынок Алеппо” как микромодель предпринимательской деятельности сирийских армян 66

Гарик Атанесян
Дискурс аутентичности и постановочное наследие в постсоветской армянской туристической практике 78

Армине Тигранян
Ограничения на участие в культурной жизни насильственно перемещенных армян из Арцаха Азербайджаном: пример Гадрута 89

III. ОБРАЗОВАНИЕ И ГЛОБАЛИЗАЦИЯ

Рубен Оганджанян
Некоторые вопросы тенденций изменения профессиональных культурных ценностей в условиях глобализации в Республике Армения 114

Лусине Ангелуш
Языковая политика Республики Армения в современных условиях 124

Макич Варданян
Дискурс глобализации в армянских СМИ: контекст проблемы образования 139

IV. ТРАДИЦИОННОЕ И СОВРЕМЕННОЕ В СОЦИАЛЬНО-КУЛЬТУРНЫХ ТРАНСФОРМАЦИЯХ

Светлана Погосян
Одежда как социально-психологический показатель советско- и пост-советско-армянского общества 158

Асмик Абрамян
Роман Овсепян
Этнокультурная роль пищи в круговороте миграции (по материалам Сюникской области) 174

V. ПРОБЛЕМЫ ДИАСПОРЫ

Рубен Карапетян
Проблема вовлечения армян в общинные структуры Диаспоры 190

Наре Галстян
Представления о родине в армянской общине Лос-Анджелеса 204

Нелли Хачатурян
Сальвине Маркосян
Мариам Арутюнян
Этнорелигиозная реконверсия в условиях глобализации (на опыте индийской, турецкой и ирландской диаспор) 218

VI. СООБЩЕНИЕ

Рипсиме Асатрян
Некоторые современные проявления детского фольклора 238

VII. РЕЦЕНЗИЯ 248

СВЕДЕНИЯ ОБ АВТОРАХ 263

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ԵՒ
ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
6

անգլերենի խմբագիրներ՝	Գարիկ Աթանեսյան Արման Խաչատյան
ռուսերենի խմբագիրներ՝	Լիլյա Վարդանյան Լուսինե Անգելուշ
հայերենի խմբագիր՝	Սեդա Քուփելյան
ձևավորում և էջադրում՝	Արտակ Հարությունյան

Տպագրվել է «Արփինե Բեգլարյան» ԱՁ տպարանում
հեռ. 043 107 090
Beglaryanprint@mail.ru

ՀԱԻԱ 6